ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Վահագն Մարաբյան
Գործադիր տնօրենի պաշտոնակատար
Գաֆէսճեան արվեստի կենտրոն

«Երևանյան կոլեկցիոներների ընտրությունը» ցուցադրությունների շարքը մեկնարկեց Գաֆէսճեան արվեստի կենտրոնում 2012թ.-ին՝ նպատակ ունենալով բացահայտելու երևանաբնակ կոլեկցիոներներին և նրանց արվեստի հավաքածուները: Լինելով Հայաստանի մշակութային կյանքում աննախադեպ իրադարձություն՝ ծրագիրն արժանացավ արվեստասեր հասարակության լայն արձագանքին, ինչպես նաև վերարժևորվեց անհատ կոլեկցիոների հանրային դերն ու նշանակությունը՝ որպես մշակութային ժառանգության ջատագով-պահապանի:

2016թ. սեպտեմբերի 22-ին Գաֆէսճեան արվեստի կենտրոնում բացվեց «Երևանյան կոլեկցիոներների ընտրությունը» շարքի երրորդ ցուցադրությունը, որը ներկայացնում է կոլեկցիոներ Բորիս Գալստյանի արվեստի հավաքածուի ընտրանին՝ կենտրոնանալով Մինաս Ավետիսյանի, Վրույր Գալստյանի և Աշոտ Հովհաննիսյանի (Դեղձ Աշոտ) աշխատանքների վրա: Բորիս Գալստյանն առանձնակի արժևորում է ազգային մոդեռնիզմի այս երեք մեծություններին, որոնց գործերի ընտրանին հասանելի կլինի հանրությանը՝ սույն ցուցադրության շրջանակներում:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում բոլոր անձանց, ում նվիրումի և ջանքերի շնորհիվ բացվեց «Երևանյան կոլեկցիոներների ընտրությունը 3՝ Բորիս Գալստյանի հավաքածու. Մինաս, Վրույր, Դեղձ Աշոտ» ցուցադրությունը Գաֆէսճեան արվեստի կենտրոնում:

Կենտրոնի անունից սրտանց շնորհավորում և շնորհակալություն եմ հայտնում կոլեկցիոներ Բորիս Գալստյանին, ով սիրով միացավ այս նախաձեռնությանը և համաձայնեց հանրայնացնել իր հավաքածուն:

Շնորհակալություն եմ հայտնում նաև Գաֆէսճեան արվեստի կենտրոնի ամբողջ անձնակազմին՝ Գաֆէսճեան ժառանգությանն անմնացորդ նվիրումի և ցուցադրությունն իրականացնելու համար:

Համոզված եմ, որ «Երևանյան կոլեկցիոներների ընտրությունը 3՝ Բորիս Գալստյանի հավաքածու. Մինաս, Վրույր, Դեղձ Աշոտ» ցուցադրությունը հրաշալի հնարավորություն կընձեռի հայաստանյան և օտարերկրյա արվեստասեր հանրությանը՝ նորովի բացահայտելու հայ արվեստի այս երախտավորներին, ինչպես նաև գնահատելու երևանյան կոլեկցիոներների նվիրումն ու մեծահոգությունը:

ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ
MINAS AVETISYAN
(1928-1975)

1928 ծնվել է Ջաջուռ գյուղում (Հայաստան)
1947-1952 սովորել է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, Երևան
1952-1954 սովորել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում
1954-1960 շարունակել է ուսումը Լենինգրադում Ի. Ռեպինի անվան գեղանկարի, քանդակի և ճարտարապետության ինստիտուտում
1960-1970-ականներ մասնակցել է բազմաթիվ խմբային ցուցադրությունների Հայաստանում և արտերկրում
1962 դարձել է ՍՍՀՄ նկարիչների միության անդամ
1968 ստացել է Հայաստանի վաստակավոր նկարչի կոչում, կայացել է նկարչի առաջին անհատական ցուցահանդեսը
1972 բազմաթիվ ստեղծագործություններ այրվում են արվեստանոցի հրդեհում
1960-1975 Մինասն ստեղծել է ավելի քան 500 գեղանկար, մոտավորապես նույն քանակի գրաֆիկական աշխատանքներ, 20 մոնումենտալ որմնանկար և տասնյակ թատերական ներկայացումների/ ֆիլմերի նկարիչ է եղել:
1975 մահացել է ավտոպատահարում

Նրա ստեղծագործությունները գտնվում են Երևանի Ժամանակակից արվեստի թանգարանի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահի, Արևելքի ժողովուրդների արվեստի թանգարանի հավաքածուներում, ինչպես նաև մասնավոր հավաքածուներում Հայաստանում և արտերկրում:

1928 born in the village of Jajur (Armenia)
1947-1952 studied at Art College after P.Terlemezyan in Yerevan
1952-1954 studied at the Yerevan State Institute of Theatre and Fine Arts
1954-1960 continued his studies at the Il. Repin Leningrad Institute for Painting, Sculpture and Architecture
1960s-1970s participated in numerous group exhibitions in Armenia and abroad
1962 became a member of USSR artists union
1968 became Honored Artist of Armenia. Had the first solo exhibition in Yerevan
1972 lots of paintings by the artist were lost during a fire in the studio
1960-1975 managed to create over 500 canvases, and nearly the same amount of drawings, 20 big frescos and design projects for dozens of theatrical performances and movies
1975 died tragically from a car accident in Yerevan

His works are in the collections of the Yerevan Museum of Modern Art, the National Gallery of Armenia, the State Tretyakov Gallery, Moscow, Museum of Peoples of the East, Moscow and numerous private collections in Armenia and abroad.

Միջազգային ուսանողական փառատոնը Մոսկվայում | World Festival of Students in Moscow | 1957

Գյուղ. երեկո | Village: Evening | 1961

Աշնանային տերևաթափ | Autumn Leaf Fall | 1974

ՎՐՈՒՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ
VRUYR GALTSYAN
(1924-1996)

1924 ծնվել է Երևանում
1958 ավարտել է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը Երևանում
1959-1964 սովորել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում
1968 դարձել է ԽՍՀՄ նկարիչների միության անդամ
1960-1980-ականներ մասնակցել է բազմաթիվ ցուցադրությունների Հայաստանում և արտերկրում
1983 կայացել է նկարչի անհատական ցուցադրությունը Հայաստանի նկարիչների միությունում
1996 մահացել է Երևանում

Վրույր Գալստյանի աշխատանքները գտնվում են Երևանի Ժամանակակից արվեստի թանգարանում, Հայաստանի ազգային պատկերասրահում, Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում, Արևելքի ժողովուրդների արվեստի թանգարանում և բազմաթիվ մասնավոր հավաքածուներում:

1924 born in Yerevan
1958 Graduated from the Art College after P.Terlemezyan in Yerevan
1959-1964 studied at Yerevan State Institute of Theatre and Fine Arts
1968 became a member of USSR Artists Union
1960-1980s participated in numerous exhibitions in Armenia and abroad
1983 personal exhibition in Artists Union of Armenia
1996 died in Yerevan

Vruyr Galstyan's artworks are now in the Yerevan Museum of Modern Art, the National Gallery of Armenia as well as in the Tretyakov Gallery, the Oriental Art Museum in Moscow and in many private collections.

Բնանկար | Landscape | 1971

Բնանկար | Landscape | 1977

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ԴԵՂՁ)
ASHOT HOVHANNISYAN (DEGHDZ)
(1929-1997)

1929 ծնվել է Մայիսյան գյուղում (Հայաստան)
1943-1947 սովորել է Ս. Մերկուրովի անվան արվեստի դպրոցում Լենինականում (Ներկայիս Գյումրի)
1948-1950 սովորել է Երևանի գեղարվեստի ուսումնարանում
1957-1964 սովորել է Լենինգրադում Ի. Ռեպինի անվան գեղանկարի, քանդակի և ճարտարապետության ինստիտուտում
1967 սկսել է դասավանդել Լենինականի մանկավարժական համալսարանում
1969 տեղափոխվել է Երևան
1970 դարձել է Հայաստանի նկարիչների միության անդամ
1970-1980-ականներ մասնակցել է մի շարք խմբային ցուցադրությունների Հայաստանում և արտերկրում
1990 ստացել է Հայաստանի վաստակավոր նկարչի կոչում
1997 մահացել է Երևանում

Աշոտ Հովհաննիսյանի ստեղծագործությունները գտնվում են Երևանի ժամանակակից արվեստի թանգարանի, Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուներում, ինչպես նաև բազմաթիվ մասնավոր հավաքածուներում Հայաստանում և արտերկրում:

1929 born in Mayisyan village (Armenia).
1943-1947 studied at the Art School after S. Merkurov in Leninakan (modern Gyumri)
1948-1950 studied at Art college in Yerevan
1957-1964 studied at Il. Repin Leningrad Institute for Painting, Sculpture and Architecture
1967 began teaching at the Leninakan State Pedagogical Institute
1969 moved to Yerevan
1970 became member of the Union of Artists of Armenia
1970-1980s participated in numerous exhibitions in Armenia and abroad
1990 received the title of Honored Artist of Armenia.
1997 died in Yerevan.

Ashot Hovhannisyan's artworks are in the collections of the Yerevan Museum of Modern Art, the National Gallery of Armenia, numerous private collections in Armenia and abroad.

Կոմպոզիցիա | Composition | 1974

Մայրամուտ | Sunset | 1980

Աշունը Մայիսյան գյուղում | Autumn in the village Mayisyan | 1985



ԲՈՐԻՍ ԳԱԼՍՏՅԱՆՆ ԻՐ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՄԱՍԻՆ

Արվեստը միշտ էլ եղել է իմ հետաքրքրությունների կիզակետում, չնայած այլ գործունեությամբ եմ զբաղվել: Աշխատանքի բերումով ծանոթացել և շփվել եմ տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց հետ, այդ թվում և արվեստագետների: Նրանց հետ զրույցները, բնական է, հիմնականում վերաբերվել են արվեստին, հայ մշակույթին, որն ինձ միշտ գրավել և կապել է այդ բնագավառին: Ընկերացա նկարիչ Սլավիկ Պարոնյանի հետ, ում և խնդրեցի ստեղծել իմ ծննդավայրը ներկայացնող մի քանի բնանկար: 1986 թվականին նա մեկնեց Լեռնային Ղարաբաղ և իրագործեց իմ խնդրանքը: Դրանք իմ առաջին ձեռքբերած նկարներն են, որոնք ինձ միշտ կապում են իմ մանկության հետ՝ վերադարձնելով դեպի սկիզբ, մաքրություն և անբիծ երազանքներ: Այդպես սկսվեց իմ հավաքածուն:

Շրջադարձային եմ համարում իմ կյանքում հանդիպումը հայտնի արվեստաբան, հասարակական գործիչ Հենրիկ Իգիթյանի հետ, ով ինձ բացահայտեց 60-ականների հայ մեծանուն գեղանկարիչներին: Լինելով Մինասի մտերիմ ընկերը՝ նա կիսվում էր ինձ հետ նկարչի և նրա ժամանակի հետ առնչվող հետաքրքիր պատմություններով, ծանոթացնում իր ստեղծած գրքերի, կատալոգների բովանդակության հետ, ինչպես նաև խոսում արվեստի չափանիշների մասին: 60-ականների այդ պոռթկումը լիովին փոխեց հայ արվեստի դեմքը, և առաջին հերթին դա վերաբերվում էր գույնին: Գույնը դարձավ ինքնուրույն, ինքնավար, խիզախ և ձևակերպեց այդ շրջանի հայ գեղանկարչության դեմքը: Իգիթյանի եզրակացությունները համընկնում էին իմ մտածելաձևին և դա է այն պատճառներից մեկը, որ ես կենտրոնացա 60-ականների ամենավառ գեղանկարիչների աշխատանքների վրա, որոնք, ինարավորություններիս սահմաններում, սկսեցի ձեռք բերել:

Իսկապես սիրեցի այդ զբաղմունքը (արվեստի գործեր հավաքելը), եթե կարելի է դա այդպես անվանել, երբ բացահայտեցի Մինասին: Մինասը ինձ համար այն արվեստագետներից էր, ով իր սերը դեպի հայրենիքը և ծնողները արտահայտում էր արվեստի միջոցով: Մինասի որ գործն էլ նայես, կա կարոտ դեպի հայրենիք, դեպի իր Ջաջուռը, կա անհետ կորսվածի անընդհատ փնտրտուք և այդ տագնապը մշտապես առկա է նրա կտավներում: Առաջին նկարիս ձեռքբերումը կարծես կոմպենսացնում էր այն կարոտը, որ կար դեպի իմ հայրենի գյուղը, և հետագայում Մինասի կտավների ձեռքբերումը կարծես մի նոր շփում էր ծննդավայրիս հետ, թեկուզ և ոչ ուղղակի ձևով: Այս տեսանկյունից նկարի ձեռքբերումը ինձ համար ոչ թե զբաղմունք էր, այլ ինքնության վերաբացահայտում, անցյալի արժևորում:

Կարծում եմ Գաֆէսճեան արվեստի կենտրոնի այս ցուցահանդեսի կարևորությունը նրանում է, որ առաջին անգամ հանդիսատեսը կտեսնի այնպիսի աշխատանքներ, որ երբևէ չեն ցուցադրվել: Բացառություն են կազմում Մինասի շուրջ տասը կտավներ, որոնք ներկայացվել են մի քանի ցուցասրահներում: Այս առումով ցանկանում եմ իմ խորին երախտագիտությունը հայտնել Գաֆէսճեան արվեստի կենտրոնին այսպիսի թաքնված գանձերը հանրությանը ներկայացնելու նպատակով մշակութային հարթակ և հնարավորություն ստեղծելու համար:

Կոլեկցիոների դերը մշակույթի զարգացման հարցում բավական կարևոր է: Կոնկրետ այս պարագայում իմ հավաքածուն կենտրոնացած է այս երեք արվեստագետների շուրջ, որը շատ հարմար է ուսումնասիրողի համար: Իհարկե, նրա համար շատ ավելի հեշտ է գնալ և տեսնել մեկ կոլեկցիոների հավաքածուի ցուցադրությունը, քան, օրինակ՝ մեկ նկարի համար հասնել պատկերասրահ, մյուսի համար՝ ժամանակակից արվեստի թանգարան: Այսինքն՝ կոլեկցիոները կենտրոնացնում է կոնկրետ հեղինակի աշխատանքները՝ հնարավորություն ստեղծելով այդ հեղինակի ուսումնասիրության համար: Բացի այդ, կոլեկցիոները նաև իր նախասիրած արվեստագետի մասնագետն է, որը թույլ է տալիս նրան բացահայտել այդ արվեստագետի նոր, դեռևս չուսումնասիրված աշխատանքները: